ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1959 Общественные науки

Վ. Պ. Դարբինյան

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՔՈՐ»-ՈՒՄ

Հ. Թումանյանը հայ մանկա-պատանեկական գրականության ամենախոշոր գեմքն է, մանկան հոգերանության լավագույն թարգմանն ու արտահայտիչը։

Թումանյանի երկերի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ գրանաստեղծը կարողացել է պահպանել ոչ միայն մանկական հուշերը, այլև զգացմունքներն ու պատկերացումները, որոնք մշակել է արտասովոր հոգատարությամբ ու գուրգուրանքով, հարստացրել դիտողություններով, իմաստավորել խորազնին վերլուծություններով ու ընդհանրացումներով։

Դրանում մեզ համոզում է նրա յուրաքանչյուր երկը, սակայն վերլուծության համար վերցնենք մեր կարծիքով ամենանշանավոր մանկական պատմվածքը՝ «Գիքորը»։

«Գիքորը» պատմվածքում Թումանյանը վերարտադրում է կապիտալիզմի զարգացման պայմաններում քայքայվող գյուղը լքած հայ երեխայի վիճակը։

Պատմվածքի հենց սկզբում հեղինակը կարճ ու դիպուկ արտահայտությամբ ցույց է տալիս, թե ինչպես սոցիալական խոշոր հակասությունները նիրբափանցել են գյուղական ընտանիքը... «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել»։

Համբոն տեսնում է, որ գյուղացու աշխատանքը չի կարող ապահովել ընտանիքի գոյությունը, ուզում է Գիքորին տանել քաղաք ու գործի դնել, որ աշխատի ու մարդ դառնա։

Հոր և մոր տարբեր դիրքավորումը միանգամայն հասկանալի է, պատճառաբանված. հայրը որպես ընտանիքի նյութական անմիջական պատասխանատուն, կյանքում ավելի փորձված ու բանիմաց, նեղ վիճակից ելք է փնտրում, չկամենալով, որ որդին իր նման խեղճ մնա։ Հայրն առաջնորդվում է գիտակցության թելադրանքով։

Մայրը ղեկավարվում էր իր զգացմունքներով, նա չի կարող և չի կամենում հետևել ամուսնու դատողություններին, հասկանալ ու համոզվել. նրա բորբոքված զգացմունքները արգելակում են այդ սառնարյուն դատողությունները։

Գիքորի մայրը Թիֆլիսը համարում է «անիրավ աշխարք», որտեղ որդուն ոչ մի լավ բան չի սպասում, ահա թե ինչու նա սրտաճմլիկ և ամեն բան ասող խոսքերով դիմում և խնդրում է ամուսնուն՝ «—Չեմ ուզում, իմ քորփա երեխին էն անիրավ աշխարքը մի դցիլ, չեմ ուզում»... Այդ մի տողում հնչում է նրա մայրական սիրո զգացմունքի հուժկու ձայնը։

Բայց օբյեկտիվ պայմաններն այնպիսին էին, որ ոչինչ չէր կարող կանգնեցնել հոսանքը դեպի քաղաք։ Գիքորը պետք է գնար... Եվ ահա Համբոն ու Գիքորը ճանապարհվում են։ «Մի խաղաղ առավոտ էր, մի տխուր առավոտ»...,

կարծես սրտամաշող ցավով ասում է հեղինակը և իր խորը թախիծը ներարկում ընթերցողին...

Լակոնիկ ու ապավորիչ է ամեն մի արտահայտություն, իմաստավորված՝ ամեն մի ակնարկ։ Զգում ես, որ ոչինչ չի ժպտում Գիքորին։

Երբ ամեն բան վերջացած է, այլևս դարձի ճամփա չկա, մոր գրկից Գիքորի փոքրիկ եղբայրը զարմացած հարցնում է՝ «Գիքո՞ր, էդ ո՞ւր ես գնում, հե՞ Գիքոր...», կարծես արտահայտելով ընդհանուր մատհոգությունը, նրան ետ կանգնեցնելու վերջին թույլ ճիգը։

Նրբանկատ հեղինակը ոչ մի տեղ չի ասում, թե Գիքորը չէր ուզում փնալ քաղաք, քանի որ նա արդեն հասկանում էր դիմադրության ապարդյուն լինելը, գիտեր, որ հոր խոսքը օրենք է և որ գուցե, իսկապես, քաղաքում վատ չի լինի։

Թումանյանը ոչ թե հայտարարություններով, այլ գործողություններով ու պատկերներով է բացահայտում իր հերոսի հոգեկան աշխարհը։ Նա չի գրում այն մասին, թե ինչ էր մտածում կամ զգում Գիքորը հոր կողքով քայլելիս, նշում է միայն, որ «Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում։ Տեսնում էր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը։ Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում։ Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր լլուրի ետև։

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում»։

Թումանյանն այստեղ նրբորեն վերլուծել է երեխայի հոգեկան վիճակը և ճշմարտացիորեն պատկերել այն։

Ըստ երևույթին, քանի դեռ Գիքորի զգայությունները չէին կտրվել հարազատներից, որոնք թեկուզ միայն հեռվից տեսանելի լինելով, տժ էին ներշնչում նրան, ինքն էլ կամենալով ցույց տալ, որ ընկճված չէ, տգեղորվում էր ու վազում, սակայն, երբ այդ տեսողական խթանները վերացան՝ դրությունը բոլորովին փոխվեց։

Երբ ամեն մի հարազատ բան աչքից չքացավ. Գիքորն զգաց, որ կտրվեց ամեն ինչից. դա ընկճեց նրան, պակասեցրեց էներգիան. հորն հասնելու կամ առաջ անցնելու այլևս ոչ մի ձգտում չմնաց։

Հայտնի է, որ աստենիկ զգայմունքները իջեցնում են օրգանիզմի ինքնակենսագործունեությունը, պակասեցնում էներգիան։ Մյուս կողմից, տարված լինելով իրեն հուզող մտքերով, Գիքորը չէր կարող ուշադրություն դարձնել իր առաջընթացի վրա։

Երևկոյան հյուրընկալվում են ծանոթ գյուղացու տանը։ Հայր ու որդի միանգամայն տարբեր ու յուրովի են ընկալում այն պայմանները, որոնք կարող էին կարծես համանման տրամադրություններ ստեղծել։ Համբոն իր ծանոթի մոտ և իր խղճի առաջ ուզում էր արդարացնել իր քայլը։

Գիքորը, քաղաքի կյանքին բոլորովին ծանոթ չլինելով, չի պատկերացնում իր ապագան, նրա մտածողությունը ծանոթ շրջանակներից դուրս չի գալիս և հաճախ խթանվում է անմիջական ընկալումներով։ Տեսնելով տանտիրոջ աղջիկա կարմիր սիրուն շորը, «Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանիի համար մի էնտեսակ շոր ղարկի»։

Ահա այսպես քայլ առ քայլ, հաճախ նույնիսկ աննկատելի մանրունքների միջոցով Թումանյանը բացահայտում է Գիքորի հոգեկանի առանձնահատկությունները։

Մյուս օրը հասնում են Թիֆլիս։ Բազազ Արտեմի հետ առաջին իսկ հանդիպումը, առաջին խոսքերն արդեն բացահայտում են ժլատ, կեղեքիչ ու դաժան վաճառականի հոգու ողջ այլանդակությունը։

Այս խեղաթյուրված հոգու տեր մարդու կողքին մենք տեսնում ենք խեղճ և ուղղամիտ գեղջուկին, որն իր միամտության հետևանքով նույնիսկ օգնում է վաճառականին, հաստատելով, որ Գիքորը իսկապես ոչինչ չգիտի և ինքն էլ բերել է քաղաք, որ բան սովորի, մարդ դառնա...

Քաղաքային կյանքի մասին ոչ մի պատկերացում չունեցող գյուղացի երեխայի մտահորիզոնը Թումանյանը դրսևորում է հոր և որդու միջև տեղի ունեցած զրույցի միջոցով։

Գիքորի բոլոր մտապատկերները, նրանց հիման վրա առաջացած պատկերացումները, պատկերները և դատողությունները գյուղական միջավայրի շրջանակներից դուրս չեն գալիս։ Երեխայի մտածողությունը կոնկրետ է, տարակայական, համեմատությունները՝ ծանոթ ու մատչելի։

— Ապի, սրանք բուխարի չունե՞ն։

— Չէ, սրանցը փեչն ա, ա՜յ էն ա փեչը...

— Կալ էլ չունե՞ն։

— Սրանք քաղաքացի են, գեղացի հո չեն, որ կալ կալսեն։

— Բա որ՞տեղից են հաց ուտում։

— Փողով առնում են ուտում։ Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փեսն էլ, ջուրն էլ»...

Լսելով, որ քաղաքում նույնիսկ ջուրը փողով են առնում, Գիքորի զարմանքը իր գագաթնակետին է հասնում։ Երեխան պերճախոս չէ, նա իր զգացմունքը հայտնում է միայն մի բացականչությամբ՝ «Վա՜»...

Հոր և որդու միջև տեղի ունեցած երկխոսությունը հոգեբանորեն շատ ճշմարտացի է ներկայացված՝ կրճատ, չվերջացրած նախադասությունները երկուսի համար էլ միանգամայն պարզ են ու հասկանալի։

— Ապի, սրանք ժամ ունե՞ն...

— Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են։ Մտիկ արա հա՜ — ձեռնաքաշություն չանես... թե չէ...

— Էստեղ էլ պրիստավ կա՜ որ...

— Կա բա՜ս...

Միշտ դտնելով մտքերն ու զգացմունքները արտահայտելու առավել դիպուկ ու հակիրճ խոսքեր, Թումանյանը վարպետորեն խուսափում է պարզունակ ու ավելորդ բացատրություններից, ընթերցողին դնում է ստեղծված իրադրության ընկալման ճանապարհին, առաջնորդում դեպի Համբոյի ու Գիքորի ներքնաշխարհը՝ խթանելով նրա երևակայությունը։

Համբոն զգում է, որ Գիքորին թողնելու է հեռու և օտար միջավայրում, գուշակում է վերահաս կարոտի ծանրությունը, բայց այդ բոլորը Թումանյանը հաղորդում է առանց սենտիմենտալիզմի՝ լռեցու անպաճույճ ու կոնկրետացված արտահայտությամբ՝ «Մին մին եկողի հետ գիր դարկի»։

Իմաստուն են, հուզիչ կեղեքված ու հնազանդության վարժված ժողովրդի ներկայացուցչի մխիթարանքի ու հորդորանքի խոսքերը։

«Հայի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն էդ ա... օրեր են, կը մենեն անց կը կենան»...

Տխուր բաժանման մասին Թումանյանը ոչինչ չի ասում, այդ ինքնին հասկանալի է։

Գիքորի կարճատև քաղաքային կյանքը ներկայացված է Երեխայի հոգեկանի առանձնահատկություններից բխող մեկը մյուսին հաջորդող, բայց անընդհատ ուժեղացող և Երեխայի կյանքն անտանելի դարձնող կոնֆլիկտների միջոցով։

Ծանր էր Գիքորի վիճակը այդ քաղքենի ընտանիքում։ Որքան էլ տնային այդ մանր գործերը հեշտ լինեին, պահանջում էին որոշ հմտություններ. նույնիսկ քաղաքացիների խոսքին՝ նրանց բաներն արտասանելու տեմպին հարմարվելը, հնչյունների յուրահատուկ գունավորումներն ընկալելը ժամանակ ու վարժվածություն էին պահանջում, սակայն ո՞վ էր նրան ժամանակ տվողը, սովորեցնողը, համբերողը։

Առաջին կոնֆլիկտի պատճառը հենց Գիքորի անտեղյակությունն ու պայմաններին հարմարված չլինելն է։

Գիքորը,— գրում է Թումանյանը,— «նստած էր խոհանոցում ու միտք էր անում, թե ընչի եկավ իրենց գյուղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պետք է անի...». ներս է մտնում տանտիկինը՝ Նատոն և ինչ որ բան ասում Գիքորին։ Գիքորը նրան չի հասկանում, բայց չի համարձակվում նորից հարցնել, ընդհակառակը, Նատոյի անտեղի վիրավորանքը («Քե՞ղ չեմ ասում, տո, արջի քոթոթ») ավելի է վախեցնում ու շփոթեցնում Երեխային։ Նատոն դուրս է գնում. Գիքորի գլխում ծաղում են մոայլ մտքեր ու վախի երանգավորում ստացած բացասական զգացմունքներ։

— Վերջացավ... բայց ինչ շուտ վերջացավ... Ինչ վատ վերջացավ... հիմի ես ի՞նչ անեմ... Ներս էլ գնաց...։

Այս դատողությունների ընթացքը բնորոշ է Երեխաների համար։ Հաճախ ամենափոքր դժվարություններն անգամ կարող են նրանց աչքում մեծանալ, ուռճանալ և ուժեղ ապրումների պատճառ դառնալ։

Այսպես, ամեն օր կշտամբանքների ու ծաղրի ենթարկվելով թե Նատոյի և թե խանութի աշակերտների կողմից, Գիքորը հետզհետե սովորում է այդ ամենին և հարմարվում պայմաններին։

Հետևյալ կոնֆլիկտը իր բնույթով նման չէ առաջինին։ Այստեղ Երեխայի ցանկությունների ու դատողությունների միջև ստեղծված հակասությունն է, որը ներքին կոնֆլիկտի ձև է ընդունում։

Առաջին տիպի դժվարությունները, ինչպես հեղինակն է ասում, «տանելի բաներ էին, անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանա»։

Եվ ահա որոշ որոնումներից հետո Գիքորը ձեռնաքաշության է դիմում. այլ կերպ չէր էլ կարող լինել։ Թեպետ հայրը պատկերել էր նրան ծառայի կյանքը, նախազգուշացրել, խրատել, Գիքորն էլ հասկացել էր, բայց մի բան է Երեխայի գիտակցությունը, այլ բան՝ նրա կենսական պահանջը։

Ուտելու պահանջն ստիպեց նրան ճաշի միջից հանել կիսաեփ միսն ու մի կերպ քաղցը հագեցնել, սակայն հենց հետևյալ մոմենտին, երբ պահանջը որոշ չափով բավարարված էր, բացասական զգացմունքները թուլացան, գլուխ բարձրացրեց ազնիվ Երեխայի վախի զգացմունքը.

«Բայց եթե նկատեի՞ն...

Ինչ վատ բան դուրս կգա՞...»։

Իր արարքի ծանրության գիտակցումը և դրա հետևանքների պատկերա-

ցումը դարձյալ ծանր ապրումների ու անելանելի վիճակի ստեղծման պատճառն են դառնում։

Եթե առաջին կոնֆլիկտի ժամանակ Գիքորը պասիվ էր, խեղճ, ինքնապաշտպանության համար ոչ մի ակտիվ միջոցի մասին չէր էլ մտածում, ապա այս դեպքում նա ակտիվորեն ելք է փնտրում այդ վիճակից՝ քաղցած մնալ չի կարող, ձեռնաքաշություն անելն էլ շատ վտանգավոր ու անընդունելի բան է նրա համար։

«Հապա ի՞նչ անես...»,— հարցնում է ինքն իրեն Գիքորը և հարցադրման ձևով պատասխանում.

«Թողնե՞ս, փախչե՞ս...

«Եվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին»։ Բայց նպատակն իրականացնելու ճանապարհին այնքա՛ն խոչընդոտներ կային, ինքն էլ դեռ այնքան փոքր ու անփորձ էր, որ բնականաբար պետք է կասկածների մեջ ընկներ, տատանվեր, նահանջեր։

«Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես. մենակ, ճամփա չգիտես, մարդ չես ճանաչում...»։

Ինչպես տեսնում ենք այստեղ հանդես են գալիս երեխայի կամքին բնորոշ առանձնահատկությունները՝ զգացմունքների ազդեցությամբ շուտափույթ որոշումներ կայացնելը, բայց առաջին իսկ դժվարություններից նույնքան արագ էլ նահանջելը, հետ կանգնելը։

Որոշումից հրաժարվելը, Գիքորի ծանր վիճակը լիովին չթեթևացրեց, բայց մյուս կողմից էլ երեխան չէր կարող այդպես լարված հոգեվիճակի մեջ մնալ և ահա այս ներքին մղումների պայքարի դժվարին մոմենտին հիշողության մեջ արթնացան հոր կերպարն ու նրա հուսադրական խոսքերը՝

«Իսկ հերը...

Էնքան չարչարվեց, խոսեց, խրատեց՝

«Եվ ահա Գիքորի գլխում հնչում է հոր խանձված ձենը.— «օրեր են, կը մթնեն, անց կը կենա՞ն... անց կը կենա՞ն...»։

Այս խոսքերը նորից ու նորից վերարտադրելով Գիքորը հանգստացավ ու թեթևացավ։

Եթե Գիքորը ազնիվ, միամիտ ու մաքուր երեխա չլիներ, ապա այս երկրորդ կոնֆլիկտը տեղի չէր ունենա։

Տվյալ կոնֆլիկտը հանդես եկավ երեխայի տարբեր հոգեվիճակների՝ քաղցը հագեցնելու համար ինչ որ միջոցների դիմելու և գիտակցաբար դրանից իրեն ետ պահելու ձգտումների բախման հետևանքով և ապա՝ քաղցը հագեցնելու բավականության ու անթույլատրելի արարքի հետ կապված անբավականության զգացմունքների պայքարի ձևով։

Այսպիսով, տարբեր հոգեվիճակների՝ ցանկությունների և գիտակցության բախումը անխուսափելի էր։ Նման ներքին դժվարությունները կարող են շատ ուժեղ կոնֆլիկտի պատճառ դառնալ։ Գիքորի մոտ այս կոնֆլիկտը շատ չի խորանում, չի կայունանում, նա հասնում է իր դադաթնակետին՝ երեխան որոշում է թողնել ամեն ինչ ու փախչել, սակայն նորանոր դժվարությունների գիտակցումը հեշտությամբ արգելակում է այդ որոշումը, իսկ հոր խոսքերը հուսադրում են երեխային։ Այսպես ուժեղացած զգացմունքները հետզհետե հանդարտվում են ու երեխայի վարքը հավասարակշռվում է։

* * *

Անցնում է որոշ ժամանակ, և Գիքորը կարծես քիչ թե շատ հարմարվում է նոր նիստ ու կացին, ավելի դյուրաշարժ դառնում։ Բայց այս ամենը դեռ բավական չէր։ Բաղաքի ընտանիքի պայմաններին լավ հարմարվելու համար, անհրաժեշտ էր ձեռք բերել նաև մտքի ճկունություն, հնարամտություն, սրագ հասկանալու և ըստ այդմ գործելու ընդունակություն։

Սա, իհարկե, շատ ավելի դժվար է և շատ ավելի երկար ժամանակ է պահանջում, քան աման լվանալը կամ կոշիկ մաքրելը։

Բաղքենի կյանքը իր պայմանականություններով, կեղծիքով, երկերեսանիությամբ, դաժանություններով Գիքորի գեղջկական հոգու համար բարդ էր ու անմատչելի։ Իրենց տանը ամեն բան պարզ էր, մաքուր, ուղղակի։

Մեծ հոգերանը կարողացել է ուժեղ կոնտրաստներ ստեղծելով, դեպքերի զարգացման ռեալիստական պլանի վրա պատկերել այն կոնֆլիկտը, որում երկու կողմերն էլ, կարծես, ճիշտ են ու իրավացի իրենց վարմունքի մեջ։

Բերենք օրինակ.

«Զանգը տվին։ Գիքորը վեր թռավ։ Ասել էին, թե երբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով է, ինչ է ուզում։ Նա դուրս եկավ, պատշգամբից նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջ կանգնած։

— Էդ ո՞վ եք, հեյ,— ձայն տվավ վերևից։

Ներքևից վերև նայեցին։

Տիկինները ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն ուղղելով հարցրեց։

— Աղջիկ պարոնը տա՞նն է։

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Գիքորը։

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ։

— Քեռ հարցնում են՝ տա՞նն է, թե չէ,— բարկացավ պարոնը։

— Բան ունե՞ք։

Էս աղմուկի վրա տիկինը դուրս եկավ»։

Թումանյանը մեծ ռեալիստի արվեստով տալիս է այն սիտուացիան, որ ստեղծվել էր այդ մոմենտին։ Տիկինները հորդորում են Նատոյին, ասելով, որ բոլոր ծառաներն էլ այդպես են, որ դրանք սիրտ են մաշում և այլն։ Նատոն իր հերթին փորձում է իր ամուսնու ժլատությունը ներկայացնել որպես մարդասիրություն՝ ասելով, թե Արտեմը պահում է Գիքորին՝ իբր աղքատ տղայի մի կտոր հաց տալու նպատակով։

Այս կարճ խոսակցության մեջ բացահայտված են քաղքենիական միջավայրի բազմաթիվ արատավոր գծեր։

Տիկին Նատոն Գիքորին ուղարկում է խանութ, որը կես ժամից հետո, հյուրերի խոսակցության պահին, ներս է մտնում ասելով՝

«— Աղջիկ պարոն, միրկը բերի։

— Հա, լավ, գնա,— հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել»։

Ցանկանալով խաղեցնի առածները լրիվ հաղորդել աղջիկ պարոնին, այսինքն իր պարտականությունը լրիվ կատարել (ինչը նրանից միշտ պահանջել էն), Գիքորը շարունակում է իր խոսքը, բոլորովին չկարծելով, որ դա շատ ծանր հետևանքներ պետք է ունենար։

— Աղջիկ պարոն, խաղեցնին ասում էր՝ բալը թանգ ա, հարկավոր չէ...

Այս նոր ու ծանր սիտուացիան դլխակորույս է դարձնում տիկին Նատոյին։

Ինչ՞ը կարող էր այլևս փրկել վարկաբեկված ընտանիքի պատիվը։ Հյուրերը փորձում են դրությունից ելք գտնել, ասելով, որ Արտեմը ճիշտ է, բայը դեռ թանկ է, հիմա ինչ բալ ուտելու ժամանակն է, ինչ նեղություն են քաշում...

Իսկ տիկին Նատոն շփոթված ու իրեն կորցրած՝ անմիտ փորձ է անում ինչ որ ձևով շտկել դրությունը՝

«— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը»։

Իսկ պրիմիտիվ և ուղղամիտ երեխան երդվում է, որ ինքը ճիշտ է ասել («Ով սուտ ասի՝ գետինը մտնի.— երդվեց Գիքորը» և, ինչպես հեղինակն է ասում. «ամեն բան լրացավ)։

Հեղինակն այլևս չի բացատրում, թե ինչպես ավարտվեց «հյուրասիրությունը», ինչպես Նատոն բաժանվեց հյուրերից...

Հետևյալ կարևոր մոմենտը Արտեմի տուն վերադառնալն է։

Խազեինը կատաղած կանչում է Գիքորին ու հարձակվում նրա վրա. «Տո՛, արջի քոթոթ, ես քեզ ասում եմ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես ղոնաղներին ասում, թե բալը թանգ է՞ր...»։ Այս ամենից հետո էլ Գիքորը չի հասկանում իր սխալը և փորձում է արդարանալ, որ ինքը աղջիկ պարոնին է ասել և ոչ ղոնաղներին։

«— Ես... ես... աղջիկ պարոնին...,— ուզում էր արդարանա Գիքորը»։

Այստեղ բազմակետերը լրացնում են երեխայի միտքը և ընթերցողի համար ամեն ինչ պարզ է դառնում։

Գիքորը ամեն ինչ հասկանում է բառացիորեն։ Մտքի ամենատարրական հնարամտության բացակայությունն էլ հենց սա է։

Իր «մեղքի» համար Գիքորը լավ ծեծվում է։ Այս ծանր մոմենտին նա (ինչպես և բոլոր երեխաները) դիմում է մորը.

«Վայ, նանի ջան, վայ... վայ... նանի ջան, վայ...»։

Այսպես, համոզիչ ձևով, առանց գույները խտացնելու, ռեալիստական պլանի վրա լուծելով հարցը՝ Թումանյանը հասնում է իր նպատակին՝ ցույց է տալիս քայքայվող գյուղի ընտանիքից պոկված երեխայի ողբերգական վիճակը։

Իհարկե, բանը նրանում չէ, որ Արտեմը կամ նրա ընտանիքը դաժան են, այլ այն, որ ամեն մի քաղքենի ընտանիք երևույթներին նայում է ոչ թե Գիքորի ու Գիքորների տեսանկյունից, այլ իր սեփական շահերի ու պատվի տեսակետից։

Գիքորին չեն հասկանում անգամ համագյուղացիները, որոնք տեսնելով նրան քաղաքաձև ու մաքուր հագուստների մեջ՝ նախանձով են մտածում նրա մասին, ցավում, որ իրենց երեխաներն էլ այդպես չեն բախտավորվել։

Չկարողանալով թափանցել Գիքորի հոգու մեջ, նրանք երևույթները դիտում են մեծերի հոգեբանության տեսակետից։

* * *

Թումանյանը 12-ամյա Գիքորի հոգեբանությունը դրսևորում է նրա ամբողջ բազմազանությամբ. երեխայի զգացմունքները, մտածելակերպը, գործողությունները—մի խոսքով վարքն իր բոլոր կողմերով բացահայտվում է բնական պայմաններում, առանց հորինովի սիտուացիաներ ստեղծելու։

Վերոհիշյալ կոնֆլիկտից հետո, այլևս ավելորդ կլիներ նույն միջավայրում տեղի ունեցած դեպքերի պատկերումը, դա կթուլացներ տպավորությունը։

Եվ Թումանյանը գտնում է սյուժեի զարգացման նոր ուղի։

Բազազ Արտեմը ամեն կերպ աշխատում է օգտագործել ձրի ծառային, եթե ոչ տանը, գոնե խանութում։

Ահա Գիքորը աշխատում է խանութում, որտեղ «չիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակ՝ մուշտարի կանչեր»։

Երեխայի վիճակը խանութում չի թեթևանում նախ այն պատճառով, որ նա ավելի շատ է ենթակա դառնում ծաղր ու ծանակի, ամեն մի պատահական հանգամանք, երեխայի ուշադրության ամեն մի շեղում... նորանոր հնարավորություններ են ստեղծվում դրա համար։

Հետո, Գիքորի հարաբերությունները շրջապատի մարդկանց հետ ավելի բազմազան են դառնում։ Առանց այն էլ կյանքի նորանոր ազդեցություններին դժվարությամբ հարմարվող երեխան այժմ պետք է ոչ միայն խազեիների կամակատարը լիներ, այլև աշակերտների, որոնք հաճախ նույնքան դաժան են իրենց ստորադասների նկատմամբ, որքան և տերերը։

Տանից ճաշը խանութ տանելու ժամանակ, կամուրջով անցնելիս Գիքորը նկատեց ուռկանը գետը գցող ձկնորսներին։ Երեխայի համար ինքնին հետաքրքիր այդ երևույթը Գիքորի մտորումներին համապատասխան իմաստավորում ստացավ։

«— Էս մինն իմ բախտից,— ասավ Գիքորը ուռկանը ձգելիս։ Գիքորի բախտը դատարկ դուրս եկավ.

— Էս մինն էլ Գալոյի բախտից։ Գալոն էլ էր անբախտ»։

Բախտագուշակությամբ կլանված Գիքորը ուզում էր փորձել նաև մյուս տնեցիների բախտը, սակայն մի ուրիշ, ավելի ուժեղ գրգռիչ արտասովոր աղմուկը շեղեց նրա ուշադրությունը։

Քարվանսարայի մոտ մեկը երգում էր ու պար ածում կապկին։ Հետաքրքիր ու գրավիչ այդ անսովոր զվարճալիքը հրապուրեց Գիքորին, նա մոռացավ ինչպես ձկնորսներին, այնպես էլ ճաշը ժամանակին հասցնելու իր պարտականությունը։ Երեխան սթափվեց միայն այն ժամանակ, երբ մի կինտո խփեց նրա գլխին ու գոռաց՝ «Ի՞նչ ես ներս խցկվում, տո լածիրակ, գնա՛ քո բանին»։ Հարվածն ու վերջին բառերը Գիքորին ոչ միայն կտրեցին զվարճալիքից, այլև ստեղծեցին նոր ասոցիացիա, հիշեցնելով, որ պետք է իր բանին գնա... Գիքորը վազելով գնաց խանութ։ Չէ որ նա արդեն հասկանում էր, թե ինչ է սպասում իրեն։

Այս հատվածում Թումանյանը բացառիկ արտահայտչականությամբ պատկերել է մանկական հետաքրքրությունների և ուշադրության ուղղվածության փոփոխումներն ու անցումները, մոռացման տրամաբանական-հոգեբանական մոտիվները, անփութության ու անհոգության համոզիչ արտահայտությունները, որոնք բացառված չեն անգամ ամենածանր ու դաժան պայմաններում։

Ընթերցողի մտքերին ու դդացմունքներին հարուստ սնունդ տալով, Թումանյանը հարկ չի համարում պատմել, թե ինչ կատարվեց Գիքորի հետ խանութում։ Չէ որ մենք արդեն տեսել ենք նման մի հանդիպում բալի կապկությամբ։

Եթե նախորդ կոնֆլիկտի ժամանակ Գիքորի հոգեկան տառապանքները կարճատև էին, որովհետև նա լավ չէր հասկանում իր սխալը և հետևաբար ինչ որ սարսափելի հետևանքներ չէր սպասում, ապա այս դեպքում՝ պատժվելուց հետո էլ ամբողջ օրը երեխան ահ ու սարսափով է սպասել իր դատաստանին։

«Իրիկունը Գիքորը կուշ էր եկել խոհանոցում։ Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խաղեթնի ապտակների տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ պարոնի ձենը...»։

Եվ ահա այս ամենին ավելանում են աշկերտ Վասոյի ծաղր ու ծանակը։

— Կլուբումն ուշացա՞ր, տո արջի քոթոթ, թե՞ գուբերնատորի մոտ վռազ գործ ունեիր...»։

Գիքորը հոգեպես այնքան էր ընկճվել, որ կաշկանդվել էին նրա և՛ միտքը, և՛ լեզուն. նա չէր համարձակվում նույնիսկ գլուխը բարձրացնել։

Երեխան չպատասխանեց Վասոյի հարվածին, նա արդեն սովոր էր այդպիսի վերաբերմունքի, սակայն խաղեթնի դալու կապակցությամբ Վասոյի ասած խոսքերը «ապա տես հիմի քեզ ինչ է անելու», Գիքորի մոտ ծանր ապրումներ ու մտքեր առաջացրին։

Դժվար չէ պատկերացնել թույլ, անօգնական, անտեր երեխայի վիճակը. նրա վախն ու հուսալքումը հասան իրենց գագաթնակետին և այդ մոմենտին Դիքորը դուշակեց ամենասարսափելին՝ «Հիմի ինձ կսպանեն,— անցավ Գիքորի մտքով ու խեղճի հոգին տապ արավ...»։

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում ևս Գիքորը հակված է մեծացնել վտանգը։ Եթե առաջին դեպքում փոքրիկ անախորժության համար Գիքորի կարծիքով պետք է փրկեն հեռացնեին, ապա այս դեպքում ճաշն ուշացնելու համար կարող էին սպանել։

Ծանր հոգեվիճակի այս կուլմինացիան երկար չէր կարող պահպանվել անհրաժեշտ էր լարվածության թուլացում և այդ թուլացումը տեղի ունեցավ։

«Խաղեթնը արդեն բավականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չտան, որ իմանա թե ինչ բան է քաղցածությունը։

Վտանգն անցավ»։

Այսպես, Գիքորը հանգստացավ, բայց միայն հոգեպես, ֆիզիկապես նա շարունակում էր տանջվել։ Նրան տանջում էր քաղցը, չէ՞ որ այդ օրը նա ոչինչ չէր կերել։ Երեխայի ուտելու բորբոքված պահանջը հիմնավորելու նպատակով, Թումանյանն ստեղծում է շատ զորեղ դրդռիչ (Գիքորի մոտ նստած Վասոն սկսեց ուտել)։

Այս հանգամանքը Գիքորի պահանջը վերածեց ուտելու արտասովոր ուժեղ ցանկության, որը թույլ չէր տալիս նրան որևէ այլ բանի մասին մտածել, ուշադրությունը շեղել և գեթ մասամբ թուլացնել այդ չբավարարված պահանջի պատճառած տանջանքը։

Գիքորի անհանգստությունը նկատեց Վասոն.

«— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում հա՞, էդպե՞ս... ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին։

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակ, թաքուն ուտում էր ու մտածում»։ Ինչպես տեսնում ենք, Թումանյանի մոտ ոչ մի մանրունք չկա, որ մտածված, առանձին ուշադրությամբ մշակված ու հոգեբանորեն ճշտված չլինի։

Հացը վերցնելիս Գիքորը չի քաշվում, չի վախենում, դողդողալով չի երկարացնում ձեռքը, այլ հափշտակում է։ Մենդի ռեֆլեքսը այնքան ուժեղ է, որ ամեն ինչ մոռանալ է տալիս։

Մյուս կարևոր ռեալիստական-հոգեբանական օրինաչափությունը ճիշտ ներկայացնող շտրիխն այն է, որ Գիքորի գլխում հանդես եկան զանազան

մտապատկերներ և հուշեր միայն այն ժամանակ, երբ նա սկսեց քաղցը հագեցնել։ Այդ հուշերն էլ սկզբում կապված են դարձյալ սննդի հետ։

«Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ապատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում...»։

Ուտելու հետ անմիջապես կապված մտապատկերները այնուհետև զուգորդումների միջոցով հանդես բերին նաև ուրիշ հուշեր.

«...Մտածում էր էն երեկոների վրա, երբ հերն ու մերը կռվում էին իրեն քաղաք բերելու համար... մերը լաց էր լինում, չէր ուզում...»։

Գիքորի ծանր վիճակը, հակադրվելով իրեն համար երանելի անցյալին, ստեղծում էր նոր մտքեր, նոր եզրակացություններ։ Այս զուգորդումները և նրանց հիման վրա առաջացած հուշերն ու դատողությունները լիովին տեղին են պատկերված, հիմնավորված ու պատճառաբանված մանկան հոգեկանի օրինաչափությունների տեսակետից։ Այսպես, դեռ գյուղում եղած ժամանակ Գիքորը անտարբեր էր մոր ու հոր վեճի ժամանակ, նա չէր հասկանում ինչպես, հոր, այնպես էլ մոր վարքագծի ողջ էությունը։ Սակայն, երբ նա քաղաքի կյանքի ամբողջ ծանրությունը զգաց, իր վրա, նոր միայն սկսեց իմաստավորել մոր վարքագիծը։

«Ա՜խ, նանի ջան, ի՞նչ լավ էր սիրտդ իմացել,— հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիր ուտում, ականջը սրած, թե խաղեինը հո չի գալիս»

Ռոմանյանը ցույց է տալիս բուրժուական հասարակարգում ուժեղացող էգոիզմը, նրա առավել վտանգավորությունն ու ծանրությունը փոքրերի համար։

Չէ՞ որ ուրիշներին հասկանալու չկամությունը, նրանց վիճակի մեջ մտնելու անկարողությունը, հարկ եղած դեպքում չհարմարվելն ու զիջումներ չանելը,— այս ամենը էգոիզմի արտահայտություններն են։

Եթե մենք տեղի ունեցած դեպքին մոտենանք Վասոյի տեսակետից, զուցե արդարացնենք վերջինիս վարքագիծը. այդ անկիրթ, առևտրականների միջավայրում մեծացած, ստորաքարշության ու կոպտությունների սովոր կինտոյի մոտ որտեղի՞ց պետք է լիներ այնքան ներանկատություն, երեխային հասկանալու կարողություն կամ երևույթները օբյեկտիվորեն վերլուծելու ընդունակություն, որ նա կարողանար մեծահոգի լինել դեպի Գիքորը։

Վասոն չէր կարող հասկանալ իր արարքների ծանրությունը Գիքորի նկատմամբ (ծաղրելը, գլխին խփելը, վախը բորբոքելը)։

Ռոմանյանը նրա մասին գրում է այնպես, որ ընթերցողի մոտ դեպի Վասոն ուժեղ հակակրանք չի ստեղծվում։ Կոնֆլիկտի վերջում նույնիսկ որոշ համակրանք է առաջանում դեպի Վասոն, որը խղճում է Գիքորին ու հաց տալիս։

Եվ դա ճիշտ է, չէ՞ որ Վասոն էլ իր միջավայրի ծնունդն է, իր ժամանակների զոհը։

Այսպես անցնում էին երեխայի օրերը, սակայն նա հարազատներին տեսնելու, գյուղ վերադառնալու հույսը չէր կորցրել։ Այդ հույսը խավարում առկայծող մի փարոս էր, որն անընդհատ հավատ ու ուժ ներշնչելով մի կերպ տանելի էր դարձնում անսպասելի դժբախտ պատահարներով լի ձանձրալի առօրյան։

Մարդկանց ծանր ապրումները թեթևանում են, երբ դրանց հաղորդակից են դարձնում ուրիշներին, լսում մարդկանց հորդորանքները և այլն։ Այս ամենն առավել ևս կարևոր է երեխաներին, որոնք ավելի զգայուն են, ավելի ենթակա աֆֆեկտների, ավելի ներշնչվող ու տպավորվող։

Գիքորի միակ մխիթարությունը ծեր դեղին էր, բայց հիմա Գիքորը նրան

համարյա չէր էլ տեսնում, նա ամբողջ օրը խանութում էր։ Բայց ով պետք է երեխային հորդորեր, ապագայի նկատմամբ հավատ ու հույս ներշնչեր։ Ամբողջ օրը միևնույն ձանձրալի ու հոգնեցուցիչ գործը կատարելով, Գիքորը հնարավորություն չուներ ուրախանալու, խաղալու, ինչ որ բան ստեղծելու, իր հետաքրքրություններին բավարարություն տալու համար։

Միակ սփոփանքը, որ մնացել էր ու ոչ ոք չէր կարող խլել Գիքորից, դա գյուղական կյանքի հուշերն էին և նրանց հետ կապված երևակայական մտապատկերները։

Երեխայի միակ իղձն էր տեսնել հարազատներին, վերադառնալ հայրական տուն և ապրել նախկին ազատ ու երջանիկ կյանքով։

Ըստ պատմվածքի տրամաբանության, Գիքորի սիրտը չերմացնող միակ կայծն էլ պետք է հանգեր և նա հանգեց։

«Մի օր էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում՝ դիմացից երկու գյուղացի դուրս եկան։ Նա վազեց, փաթաթվեց գյուղացիներին»։

Համագյուղացիները չճանաչեցին Գիքորին, որովհետև նա շատ էր փոխվել, մաշվել։ Նրանք հիացան Գիքորի քաղաքատիպ արտաքինով, նախանձեցին Համբոյին, որն իր որդուն մարդ էր դարձրել։

— Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իր տղին որտեղ հասցրեց, մեր տղերքը ինչեղ խոզ են արածացնում...

Չգիտենալով կյանքի սոցիալական խոր հակասությունները, չհասկանալով նյութական ու բարոյական ստրկացման նոր ձևերը, Համբոյի համագյուղացիները հիացած են մեծ ու հարուստ քաղաքի շլացուցիչ արտաքին փայլով, հակված են Թիֆլիսում տեսնել միայն հարստություն ու բարօրություն։ «— Այ տղա, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորքին...—հիանում էին գյուղացիները»։

Գիքորի հարցերի պատասխաններից պարզվեց, որ իրենց ընտանիքում ոչ մի հուսադրական բան չկա, հայրն էլ աղքատ է, քաղաք չի կարող գալ, բայց այնուամենայնիվ Գիքորը ցանկանում էր նրանց հետ գյուղ գնալ։ Գիքորին դրդեցնում էր միայն այդ միտքը։

— Ուզում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ։ Համ մեր գեղին,համ մերոնց կարոտել եմ, համ էլ...

Եթե համագյուղացիները մի քիչ նրբանկատ լինեին, ապա Գիքորի սկսած, բայց չվերջացրած նախադասությունը կհասկանային, գոնե հուսադրական, թաքնվերական խոսքեր կասեին, բայց այդ ամենի փոխարեն նրանք երեխային միայն նախատեցին.

«— էն որ ասել են՝ «խոզի գլուխը դրին խալիչին, գլորվեց ետ ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել։ Էսպես հանդիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնաս բարով ասին ու գնացին»։ Գիքորն ընկճվեց ու այլևս ոչինչ չասաց, բացի այդ նա դեռ պետք է լսեր հորը, որին պատկանում էր վերջին խոսքը։ Գիքորը քաշվեց իր անկյունը և սկսեց կարդալ հոր նամակը։

Սրտակտուր նամակը կարդալուց հետո գյուղ վերադառնալու հույսերը վերջնականապես մեռան։

«Նանն ու Ջանին տկլոր են... տեղներս նեղ ա...» մտքում նամակի խոսքերն էր կրկնում Գիքորը, մինչդեռ անհոգ ու անտարբեր ուրիշի դժբախտության նկատմամբ առևտրականը երեխայի վրա գոռում է.

«— Կանչի է՛, տո, ինչ՞ ես վերացել, ուշքդ հետները գնա՞ց...»։

Գյուղ վերադառնալու պատրանքի վերջն է այս։ Գիքորն սթափվում է և զգում դառն իրականության վերջնական հաղթանակը։

Երեխայի ապրումների այսպիսի կոնտրաստներ ստեղծելով, Թումանյանն իր պատմվածքը տանում է դեպի տրամաբանական վախճանը։

Բծախնդիր ու պահանջկոտ Նատոյի տնային ծառա, ապա խանութի աշակերտ Գիքորը զգում է իր աննկանելի դրությունը։ Բայց այդ քիչ է, Թումանյանը ուզում է ցույց տալ, որ զարգացող կապիտալիզմը և նրա բուրժուական քաղաքային կյանքը ոչ միայն խեղանդամ են անում, լլկում, ստորացնում ու բարոյալքում խեղճերին, աղքատներին, երեխաներին, այլև մահվան դուռն են հասցնում, ֆիզիկապես ոչնչացնում նրանց։

Հանճարեղ նկարչի վրձինի համարձակ ու վառ գծերով են պատկերված դժբախտ երեխայի հիվանդանալու պատմության տեսարանները։

Եթե Գիքորի հոգում ոչ մի տաքացնող հույս չկար, ապա ի՞նչը կարող էր փրկել նրան դաժան ցրտից ու քամիներից։

Եվ ահա, հոգեպես ընկճված, նիհարած, ձմռան ցրտին միայն մի բարակ բլուզ հագած Գիքորը կանգնած էր խանութի առաջ՝ ենթակա բուք ու բորանի ավերիչ ազդեցությանը։

«Ձմեռը եկավ։ Սառն աղմուկով ձյունախառն բուքը թռչում է քաղաքի վրայով։ Փողոցներում սուլում, սուլում, հոսան է անում։ Վզզալով մտնում է անկյունները, աղքատի ու ակլորի է ման գալիս, պանդուխտ ու անտեր երեխա է որոնում։

Ահա գտավ Գիքորին։

— Հրե՜սսս...—չարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ թրի նման, զարկեց անցավ ոսկորները։ Գիքորը դողաց»։

Այնքան պարզ, հակիրճ, ճշմարտացի ու արտահայտիչ են այս խոսքերը, այնքան հուզական, որ կարծես լսում ես քամու չարախինդ սուլոցը, ֆիզիկական մի դող է անցնում մարմնովդ, հասնում մինչև ոսկորներդ... սիրտդ...։

12-րդ մասում ընդամենը տասը տողում ստեղծված պատկերը ցնցող տպավորություն է թողնում ամեն մի ընթերցողի վրա. առանց արցունքների չի կարելի կարդալ այդ տողերը դրանք առավել ես հուզող են, որովհետև վերաբերում են հարազատներից պոկված ու անդունդը նետված խեղճ ու անօգնական երեխային։ Բաղալ Արտեմի և կնոջ անմարդկային վերաբերմունքը ծանր հիվանդացած Գիքորի նկատմամբ Թումանյանն արտահայտում է հակիրճ ձևով՝ նա պառկած է «Բաղալ Արտեմի խոհանոցում», և խաղեիններին միայն մտահոգում էր Գիքորին հիվանդանոց փոխադրելու և հորը հայտնելու անհրաժեշտությունը։

Միայն պառավ դեղին՝ նահապետական տրադիցիաներով դաստիարակված և Թիֆլիսի [illegible] «[illegible]» ազդեցություններից ազատ այդ դրական հերոսն է, որ ցավում էր ու հոգում Գիքորի առողջության մասին։

Սակավախոս է Թումանյանը հիվանդի վիճակի, ապրումների ու տանջանքների նկարագրության մեջ. Այլ հեղինակ գուցե այս մասին մի գլուխ գրեր, բայց Թումանյանը սահմանափակվում է մեկ-երկու նախադասությամբ, որոնցում սակայն ոչ միայն բացված է Գիքորի հոգին, այլև կատարված է խոշոր ընդհանրացում։

«Հիվանդ պառկած էր Գիքորը բաղալ Արտեմի խոհանոցում։ Պառավ դեղին օրը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն-իրեն խոսելով։

— Ինչ կուզես, որդի՛, Գիքո՛ր։

— Ջո՛ւր...

Դեղին ջուր էր տալիս։ Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում»։

Հին Թիֆլիսի տաք ու անհամ ջուրը խմելիս Գիքորը անկասկած, միշտ էլ կարոտով ու ծարավով էր հիշել Լոռու սառն ու վճիտ աղբյուրները։ Սակայն այդ մասին Թումանյանը պատմվածքի սկզբում չի խոսում, այլ թողնում է վերջին բաժնին, երբ Գիքորը հիվանդ է և ջերմության մեջ տառապում է սառը ջրի այրող պահանջից։ Այսպես, ամեն բան իր տեղում է, հոգեբանական զարգացման համապատասխան աստիճանի վրա։

«— Էս սիրտս հովացնում չի, դե՛դի... ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում, դե՛դի»։

Ընթերցողն զգում է, որ խոսքը ոչ միայն և ոչ այնքան ջրի մասին է, որքան այն պայմանների, որոնցում Գիքորը կյանք չի կարող ունենալ։ Ոչ մի բուժում չի կարող փրկել իր հոգեվարքն ապրող դժբախտին։

Թիֆլիսի ջուրը չի հովացնում Գիքորին, ինչպես չի օգնում բարի, բայց սառը դեղի օրեկան մի քանի անգամ խոհանոց մտնելը։ Այդ են վկայում Գիքորի մինչև արտասունք հուզիչ խոսքերը, որոնք իրենց բովանդակության մեջ խիստ կոնկրետացված են, բայց հոգեբանորեն ընդհանրացնում են նրա ապրումների ողջ գամման։

«... Ես մեր տունն եմ գնում... Ես իմ նանին եմ ուզում...»։

Որդու հիվանդության լուրը ստանալով Համբոն գալիս է Թիֆլիս և Գիքորին գտնում հիվանդանոցում՝ հոգևարքի մեջ։ Թե ինչքան էր նիհարել, գունատվել, կերպարանափոխվել երբեմնի առողջ ու աշխույժ երեխան, այդ երևում է հոր խոսքերից «Էդ ինչ ես էլել, Գիքոր ջան,— մղկտալով վրա ընկավ Համբոն»։ «Մղկտոցը», «վրա ընկնելը», և «էդ ինչ ես եղել» խոսուն բնութագրությունը ընթերցողի երևակայության մեջ ստեղծում են շատ ավելի կոնկրետ պատկերացումներ, քան երկար ու բարակ սենտիմենտալ նկարագրություններն ու հայտարարությունները երեխայի վիճակի մասին։ Այստեղ ևս մենք տեսնում ենք դործողության և պատկերի ուժը։ Բնորոշ է նաև այն, որ Գիքորի զառանցանքի մեջ արտահայտված են երկու մոմենտներ՝ տուն վերադառնալու և հարազատներին տեսնելու կարոտը («Միկիչ, Ջանի, ապի նանի») և իր ծանր ու տհաճ պարտականության կատարման անհրաժեշտության զգացմունքը («— Էստի՞ համեցե՞ր, էստի՞ համեցե՞ք»)։

Ինչպես ամբողջ պատմվածքի ընթացքում, այնպես էլ նրա վերջում կարծես աննշան, սակայն խիստ հուզող ու կարևոր շարիխով Թումանյանը դարձյալ վերադառնում է Գիքորի ներքնաշխարհին։

Որքա՞ն բնորոշ է փոքրիկի հոգեբանությանը նաև այն, որ Գիքորը մի քանի դույնզդույն կոճակները խնամքով պահել էր գրպանում՝ քրոջը նվիրելու նպատակով։ Այս մոմենտը մյուս կողմից ցույց է տալիս Գիքորի հոգու մաքրությունը. ապրելով հարուստ վաճառականի ընտանիքում, աշխատելով նրա խանութում, նա իրեն թույլ չէր տվել որևէ բան յուրացնել, և պահել էր միայն այն, ինչ գտել էր կամ հավաքել, հրապուրվելով դրանց արտաքին գեղեցկությամբ («մի բուռ փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ և մի բանի քորոց»)։ Բոլոր այս մանրուքները բացահայտում են հերոսի կերպարը, ընթերցողին մտերմացնում ու ցավակից դարձնում Գիքորին՝ անխզելի հոգե-

կան կապ ստեղծելով նրա հետ։ Համայիչ վարպետը իր պատմվածքի վերջում մեզ նորից վերադարձնում է դեպի տխուր բաժանման միջադեպերը և մենք Համբոյի հետ վերհիշում ենք ճանապարհը դեպի Թիֆլիս «ահա էստեղ էր, որ նա ասավ.— Ապի, ոտներս ցավում են... Եվ ահա են ծառը, որի տակ նստեցինք հանգստանալու... Ահա էստեղ էր, որ ասավ.— Ապի, ծարավ եմ...»։

Դժվար չէ նկատել, որ հոգնելու ու ծարավելու մոմենտները հիշվում են միայն վերջում։ Հեղինակն այդ օգտագործում է Գիքորի մահը սգացող հոր զգացմունքների արտահայտության համար։ Չէ՞ որ կորստից հետո միշտ հիշվում են դժվարությունները, փորձությունները, որոնք այլ պայմաններում կարող էին միանգամայն աննկատ մնալ։

Գիքորի մահվան և հոր ծանր ապրումների ցնցող պատկերները մեխվում են ընթերցողի երևակայության մեջ, լցնում նրա սիրտը անհուն ատելությամբ անիծյալ անցյալում տիրող դաժան կարգերի ու բարքերի նկատմամբ։

Մի փոքր երեխայի բախտի պատկերումով Թումանյանը հասել է խոշոր գաղափարական ու գեղարվեստական ընդհանրացումների և հոգեբանական ռեալիզմի փայլուն հաղթանակի։ Ահա թե ինչու «Գիքորը» եղել է ու կմնա մեր մանուկների, պատանիների, ինչպես և մեծերի կողմից խորապես սիրված պատմվածք։